

## ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարանի գիտական խորհրդի 2014թ. հոկտեմբերի 29-ի նիստի  
(արձանագրություն N° 4)

Լսելով Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի Մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման և կրթական ծրագրերի մատուցման գործընթացի մասին ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանի հաղորդումը՝

### Գիտական խորհուրդը որոշում է՝

1. Համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացը համարել նպատակահարմար և 2015 թվականից ՀՊՄՀ-ում ստեղծել մասնագիտական որակավորումների բարձրացման և վերապատրաստման, կրթական ծառայություններ մատուցելու բաժին:
2. Համալսարանում հետբուհական լրացուցիչ կրթությունը կազմակերպել երեք կրթական ծրագրով՝ որակավորման բարձրացում, մասնագիտական վերապատրաստում և կրթական ծառայություններ:
3. Մինչև 2015 թվականի հունվար ամիսը մշակել որակավորման բարձրացման, մասնագիտական վերապատրաստման և կրթական ծառայությունների իրականացման ծրագրեր:
4. Իրականացնել նախապատրաստական աշխատանքներ 2015 թվականի հունվարից համալսարանում ներդնելու մասնագիտական որակավորումների բարձրացման և վերապատրաստման, կրթական ծառայություններ մատուցելու գործընթացը:
5. 2017 թվականի հոկտեմբերից մասնագիտական որակավորումների բարձրացման և վերապատրաստման գործընթացը պետք է հանդիսանա պարտադիր պայման ընտրությունների ժամանակ:
6. Գործընթացի պատասխանատվությունը և հսկողությունը դնել ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանի և աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանի վրա:

ՌԵԿՏՈՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ